Արձանագրություն N 2
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **23.02.2022թ.**
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Թեմուրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Խալաթյան, Հ. Հարությունյան, Ա. Ներսիսյան, Ա. Եղոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Մեժունց

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-ԳՀԱՊՁԲ-22/9» ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն

(Ա. Թեմուրյան)

Հարցադրում N 1

1. Նշված մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 5-րդ՝ այն է. «Տեղադրում (Տեղադրումը իր մեջ ներառում է՝ մալուխների անցկացում, միացում էլեկտրական վահանակին և էլեկտրաշչակին) և 6-րդ՝ «Տեղադրման համար անհրաժեշտ պարագաներ (անհրաժեշտ պարագաները իր մեջ ներառում են՝ մալուխներ՝ 5x2.5 մմ2 պղնձե հաղորդալար միաֆազ հոսանքի համար, 5x4 մմ2 պղնձե հաղորդալար եռաֆազ հոսանքի համար, մալուխների ամրացման համար անհրաժեշտ պարագաներ՝ պտուտակ, հեղույս (болт), տափողակ (шайба), մալուխների համար նախատեսված ամրակներ, անհրաժեշտության դեպքում կոնստրուկցիաների՝ հենակի կամ այլ հարմարանքի պատրաստում» կետերում ձեր կողմից նշված մալուխներն արդյո՞ք առկա են, թե դրանք պետք է մատակարված լինեն մասնակցի կողմից: Եթե առկա չեն, որքա՞ն մալուխի մասին է խոսքը և որքա՞ն գծամետր մալուխ պետք է մատակարարվի՝ ըստ տրամաչափերի:
2. Առկա տեղադրված համակարգերն արդյո՞ք հողանցված են, թե ոչ: Կանխավ շնորհակալություն,

Պարզաբանում N 1

Ի պատասխան Ձեր կողմից պահանջված պարզաբանման,

1. Թվով 99 նոր տեղադրված էլեկտրաշչակները,ըստ հանձնման-ընդունման ակտերի միացված են էլեկտրասնուցմանը, իսկ նախկինում տեղադրված թվով 106 էլեկտրաշչակները ստուգվել են 2020 թվականին և նույնպես ստուգման պահին միացված են եղել կամ միացվել են էլեկտրասնուցմանը:
Ելնելով վերոգրյալից պարզ է դառնում, որ մալուխները հիմնականում առկա են, իսկ որոշակի խնդիրների դեպքում պետք է ցուցաբերվի անհատական մոտեցում:
2. Համակարգը տեղադրելիս անհրաժեշտ է իրականացնել հողանցման աշխատանքներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Թեմուրյան
Անդամներ՝		Ս. Խալաթյան
		Հ. Հարությունյան
		Ա. Ներսիսյան
		Ա. Եղոյան
Համակարգող՝		Վ. Մեժունց